«30» 10 2025թ. ք.Երևան, Ծովակալ Իսակովի 29

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԲԻ ԷԼ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-Ն ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Ներքին գործերի նախարարության կրթահամալիր ՊՈԱԿ-ի կողմից 09.10.2025թ. հրապարակվել է ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով գնանշման հարցման հրավեր:

Հայտ են ներկայացրել «Ջի Էլ Թի» ՍՊԸ-ն, «Արտ Օֆ Շին» ՍՊԸ-ն, «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ն և «ԲԻ ԷԼ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով հայտերով ներկայացված փաստաթղթերը, արձանագրել է, որ բոլոր մասնակիցների հայտերը համապատասխանում են ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով գնման հրավերով սահմանված ծրարների կազմման և ներկայացման պահանջներին:

Միաժամանակ արձանագրվել է, որ բոլոր չորս մասնակիցների ներկայացրած հայտերում բացակայում է «Ֆինանսական միջոցների» բավարար լինելու հավաստման որակավորման չափանիշը (Հավելված 1.3):

«Ջի Էլ Թի» ՍՊԸ-ի, «Արտ Օֆ Շին» ՍՊԸ-ի, «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ի և «ԲԻ ԷԼ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերում բացակայում են ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի 2.4.1 կետով նախատեսված որակավորման չափանիշները, այդ թվում՝ մասնագիտական փորձառության, նմանատիպ աշխատանքներ կատարելու վերաբերյալ պայմանագրերի, հանձնման-ընդունման ակտերի, արձանագրությունների, հաշիվ-ապրանքագրերի պատճենների և տեխնիկական միջոցների վերաբերյալ տեղեկությունները (Հավելված 1, 2):

Հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, և մասնակիցներին առաջարկվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերանայելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջի Էլ Թի» ՍՊԸ-ի, «Արտ Օֆ Շին» ՍՊԸ-ի, «Ատեքս Գրուպ» ՍՊԸ-ի փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

«ԲԻ ԷԼ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են.

- բացակայում են նմանատիպ աշխատանքների պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունների և հաշիվ-ապրանքագրերի պատճենները,

- ներկայացված պայմանագրերն անավարտ են,
- տարբեր ընկերությունների կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերը չեն ուղեկցվում համապատասխան պայմանագրերով, ինչը թույլ չի տալիս հաստատել ընկերության մասնագիտական փորձառության և որակավորման բավարար մակարդակը:

Հանձնաժողովի որոշմամբ երեք կազմակերպությունների ներկայացված շտկված փաստաթղթերը գնահատվել են բավարար, իսկ «ԲԻ ԷԼ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը՝ անբավարար:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ « եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում այն դեպքում, երբ խախտում է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որի հետևանքով պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը կամ դադարեցնում է տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի նույն հոդվածի 2-րդ մասի, և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի պահանջները՝

ՈՐՈՇԵՑԻ

Ըստ ստորև բերված աղյուսակում նշված հանգամանքի՝ «Բի Էլ Քնսթրաքշն» ՍՊԸ-ն, ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
Ծածկագիրը	Չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	Համարը	Անվանումը	Գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԱՇՁԲ-25/8	1	Շենք-շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	8700000	«Բի Էլ Քնսթրաքշն» ՍՊԸ	09223306	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Գորիս, Սյունիքի փող. 142շ. 14 բն.	17.10.2025	ՀՀ ՆԳՆ Կրթահամալիր ՊՈԱԿ	Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15 կետ/ հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը	Առկա չէ

ՌԵԿՏՈՐ՝ **Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**